ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև 2020թվականի հունիսի 12-ին ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԾԾ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ**

**ք. Երևան** **27.07.2020թ.**

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտորի պարտականությունները կատարող Ա. Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Բլամմո» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Մ. Սարգսյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, Պատվիրատուի և Կատարողի 2020 թվականի հունիսի 12-ին ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԾԾ-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին պայմանագրի Հավելված N1 նախատեսված ծառայության մատուցման ժամկետը փոփոխել և սահմանել 2020թվականի օգոստոսի 1-ից մինչև 2020թվականի օգոստոսի 26-ը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ | «Բլամմո» ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 128 | ք. Երևան, Վարդաքնանց 10/37 |
| Գանձապետարանի հաշվարկային հաշիվ | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| 900018001876 | Հ/Հ 2205533349250000 |
| ՀՎՀՀ՝ 01503224 | ՀՎՀՀ 02817881 |

Ռեկտորի պարտականությունները կատարող՝ ________ Ա. Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ.

Տնօրեն ________ Մ. Սարգսյան
(ստորագրություն) Կ.Տ.